

Խորհրդային անցյալի շուրջ դիսկուրսն անկախության շրջանում



ԻՐԱՉԵԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԻԱԿՈՐՈՒՄ

Ներածություն

«Պետական գործիչների կողմից ներկայացվող հավաքական հիշողության բովանդակությունը» հետազոտական նախագծի՝ «Խորհրդային անցյալի շուրջ դիսկուրսն անկախության շրջանում» մասը նպատակ ունի ուսումնասիրելու Հայաստանի Հանրապետության երեք նախկին նախագահների իշխանության օրոք՝ 1991-ից 2018-ն ընկած ժամանակահատվածում երկրի խորհրդային անցյալի մասին հիշատակումները և Հայաստանի երկրորդ հանրապետության անցյալի ներկայացումը հանրապետության իշխանությունների պաշտոնական հայտարարություններում, ինչպես նաև պետական մամուլում:

Յոթանասունամյա գոյությունից հետո Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, որի կազմում, ի թիվս 15 հանրապետությունների, նաև Հայաստանն էր, դադարեց գոյություն ունենալ 1991 թվականին: Հայաստանն իր պաշտոնական անկախությունը տարեգրում է 1991 թվականի սեպտեմբերի 21-ից: Հաշվի առնելով Խորհրդային Միության թողած ազդեցությունը Հայաստանի հասարակական-քաղաքական, մշակութային, տնտեսական կյանքի վրա՝ Հայաստանի երկրորդ հանրապետության տարիների պատմությունը հաճախ է շահարկման թեմա դարձել հանրապետության նախագահների կողմից, նաև երկրի աշխարհաքաղաքական դիրքավորումների համատեքստում:

Հետազոտությունն իրականացնելու նպատակով ուսումնասիրության են ենթարկվել պաշտոնական մամուլը՝ մասնավորապես «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթը, հանրապետության նախագահների հարցազրույցների և ելույթների ժողովածուները, իսկ հանրապետության երկրորդ և երրորդ նախագահների դեպքում՝ նաև նրանց պաշտոնական կայքէջերը:

Հետազոտությունում, երեք նախագահների կողմից վարվող պաշտոնական դիսկուրսից բացի, ուսումնասիրության են ենթարկվել պետական մեդիայում խորհրդային անցյալի ներկայացման առանձնահատկությունները և ձևափոխումները՝ ըստ ժամանակաշրջանների:

Խորհրդային անցյալի ներկայացումը Լևոն Տեր-Պետրոսյանի իշխանության տարիներին



Լևոն Տեր-Պետրոսյանը նախագահի պաշտոնը ստանձնեց 1991 թվականին՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության փլուզման օրերին՝ խորհրդային իշխանությունների դեմ բազմահազարանոց բողոքի ցույցերի և 70-ամյա հասարակարգի փլուզման ֆոնին:

Տեր-Պետրոսյանը խորհրդային իշխանության տարիներին աչքի է ընկել իր այլախոհական

գործունեությամբ: Նրա իշխանության առաջին տարիները դեռևս խորհրդային հասարակարգի փլուզմանը հարմարվելու և հանրային ընկալումների տրանսֆորմացիայի օրերին էին: Ստեղծված նոր պայմաններում հասարակությունը հասարակարգային ձևափոխումների էր ենթարկվում, իսկ Հայաստանի նորանկախ հանրապետությունը, որպես համաշխարհային հարթակում նոր, առանձին միավոր, ստեղծում էր նոր մեխանիզմներ՝ գոյության իր իրավունքը պաշտպանելու համար:

Սա նաև ժամանակաշրջան էր, երբ հայաստանյան հասարակության զգալի մասն առաջնորդվում էր Խորհրդային Միությունից ժառանգված արժեհամակարգով, իսկ խորհրդային իրականությունը քայլ առ քայլ դառնում էր անցյալ՝ այդուհանդերձ, այդ օրերին մշտապես արդիական թեմա լինելով Հայաստանի քաղաքական դիսկուրսում:

Իր ելույթներում թե՛ նախագահ Տեր-Պետրոսյանը, թե՛ նրա օրոք գործող կառավարությունն ու դրա անդամները հաճախ են ստեղծված իրավիճակի և խորհրդային անցյալի միջև զուգահեռներ տարել՝ առավել հաճախ գոյություն ունեցող իրադրությունը պայմանավորելով հենց երկրի խորհրդային անցյալով: Տեր-Պետրոսյանը, որը, իր հերթին, խորհրդային իշխանությունների ընդդիմախոսն է եղել և միության տարիներին հայտնի էր իր այլախոհությամբ, հաճախ է իր ելույթներում քննադատություն ենթարկել կոմունիստական անցյալը՝ հակադրելով դրան Հայաստանի ժողովրդավարական զարգացման հնարավորությունները:

Հայաստանի անկախացմամբ երկրի համար նոր հնարավորություններ էին ստեղծվում, և պաշտոնական դիսկուրսում դրանք անձամբ Տեր-Պետրոսյանի կողմից ներկայացվել են որպես ԽՍՀՄ փակուղային, կայսերական և ստրկատիրական իրավիճակներից դուրս գալու հնարավորություններ:

Խորհրդային անցյալն ազդեցություն է ունեցել և որոշ դեպքերում ինքին ձևավորել է Հայաստանում պետական և հասարակական գործունեության բոլոր բնագավառները, և Տեր-Պետրոսյանի առանձին ելույթներում քննադատություն կա այդ բոլոր բնագավառներում անցյալի ժառանգության բացասական հետևանքների և դրանցից ազատվելու անհրաժեշտության մասին:

Նորանկախ հանրապետության պետական համակարգի ստեղծման ճանապարհին Տեր-Պետրոսյանի հանրային ելույթներում նաև հաճախ ենք հանդիպում ԽՍՀՄ-ից ժառանգություն մնացած պետական մի շարք կառույցների գործելաճի փոփոխության անհրաժեշտության մասին: Օրինակ, ընդգծելով ազգային անվտանգության խորհրդային արատավոր գործունեության փոփոխության անհրաժեշտությունը՝ իրավապահ մարմինների հանրապետական խորհրդակցության 1994-ի օգոստոսի 5-ի իր ելույթում Տեր-Պետրոսյանն անդրադառնում է նույն տարվա սկզբին ստորագրված մի հրամանագրի, որը վերաբերում էր Ազգային անվտանգության պետական վարչությանը: Առաջին նախագահն այս ելույթում ուրախություն է հայտնում այդ հրամանագրով ԿԳԲ-ի ոչնչացման առիթով՝ հայտարարելով, որ այդ ծառայությունը նախկին 70 տարիներին «ծառայել էր բոլորովին այլ նպատակների»:

1993-ի ամռանը Հայաստանի Ազգային անվտանգության պետական վարչությունն սկսեց տպագրության պատրաստել 1930 թվականից սկսված ստալինյան բռնությունների այն գոհերի ցուցակները, որոնց վերաբերյալ պահպանված տվյալներ կային արխիվում: Ավելի ուշ այդ ցուցակները մաս առ մաս սկսեցին հրապարակվել «Հիշենք անուն առ անուն» խորագրով «Հայաստանի Հանրապետություն» և «Ռեսպուբլիկա Արեմնիա» թերթերում:

Ավելին, նույն թվականին՝ սկսած նոյեմբեր ամսից, պաշտոնաթերթում հաճախ ենք հանդիպում Խորհրդային Միությունը և կոմունիզմին ուղղված ծաղրանկարներ:

Խորհրդային Միության տարների բացասական ազդեցության որոշ ասպեկտների քննադատություն նկատում ենք հասարակական և պետական գործունեության բազմաթիվ բնագավառներում, այդ թվում՝ նաև կրթության մասին խոսելիս: Տեր-Պետրոսյանը գտնում էր, որ Հայաստանի առաջին հարապետության փլուզումից հետո «հազարամյա հայ մշակույթի էությունը կազմող առողջ արմատների վրա հայ գիտության և բարձրագույն կրթության հունը ենթարկվեց լուրջ ձևախեղումների, որոնց հետևանքով, նախ, խափանվեց ամիջական ու համընթաց հաղորդակցությունն արտաքին աշխարհի գիտական նվաճումների հետ, իսկ



այնուհետև գրեթե լիովին խզվեց նաև համալսարանական կրթության կապը միջնադարյան հայ մշակույթի ժառանգության հետ»:

Երևանի պետական համալսարանի 75-ամյակի հոբելյանական հանդիսության ժամանակ իր ունեցած ելույթում Տեր-Պետրոսյանը նաև հիշատակում է, որ նախկին տարիների ընթացքում ծանր հարված է հասցրվել հատկապես հումանիտար գիտություններին՝ պատճառ ներկայացնելով նախկինում «վուզար-մատերիալիզմի» համատարած տիրապետությունը: Տեր-Պետրոսյանն այստեղ հիշատակում է նաև ստալինյան բռնապետության գիշատիչ հալածանքին զոհ դարձած հարյուրավոր ուսանողների և դասախոսների մասին:

Հանրապետության անցյալի մասին իր որոշ ելույթներում, խոսելով 1990-ականների սկզբին երկրում գոյություն ունեցող նոստալգիայի մթնոլորտի մասին, Տեր-Պետրոսյանը հաճախ է այդ տարիներն անվանում դիկտատուրայի տարիներ՝ միևնույն ժամանակ նորանկախ Հայաստանը ներկայացնելով որպես ժողովրդավարության երկիր:

Տեր-Պետրոսյանի նախագահության շրջանում խորհրդային անցյալի առավել շատ հիշատակումներ հանդիպում ենք նրա և երկրի ղեկավար կազմի պաշտոնական այն ելույթներում և հարցազրույցներում, որոնցում քննարկվում է Հայոց ցեղասպանության թեման: Համալսարանի հոբելյանին նվիրված ելույթում նախագահն առանձնահատուկ կարևորում է 1967-ին մեծ դժվարությամբ և անհրաժեշտ գաղտնապահություն պահանջող ջանքերի շնորհիվ համալսարանականների կողմից եղեռնի զոհերի հուշարձանին ծաղկեպսակ դնելը:

Տեր-Պետրոսյանի գլխավոր խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը Հայաստանի Հանրապետություն պաշտոնաթերթին տված հարցազրույցում, իր հերթին, ընդգծում է, որ խորհրդային Հայաստանում բավական դժվար է եղել Ցեղասպանության ուսումնասիրությամբ զբաղվելը, քանի որ դա խանգարել է քաղաքական գաղափարախոսությունը և, առհասարակ, քանի որ խորհրդային հասարկարգում հասարակական գիտություններն ընդհանրապես ցածր էին միջազգային մակարդակից:

Գերագույն հոգևոր խորհրդի անդամների հետ հանդիպումներից մեկի ընացքում 1996-ին, Տեր-Պետրոսյանը, Հայ-առաքելական եկեղեցու՝ իր առաքելությունը սեփական պետականության պայմաններում իրականացնելու մասին խոսելով, ընդգծում է, որ այդ ժամանակ եկեղեցու գործունեության համար բացվել են նոր հորիզոններ, և այն հնարավորություն է ստացել գործելու ազատ աթեիզմի ստրկությունից և կոմունիստական բռնատիրությունից:

ԽՍՀՄ փլուզումը զուգորդվեց նախկին միության տարածքում տնտեսական նոր միավորի՝ Անկախ պետությունների համագործակցության ստեղծմամբ: 1992 թ.-ին Դավոսի ամենամյա տնտեսական ֆորումին առաջին անգամ մասնակցող Հայաստանի նախագահը կարծիք էր հայտնել, որ մեկ տարի ժամանակ կպահանջվի միության նախկին տարածքում ապակենտրոնացման գործընթացն ավարտին

հասցնելու համար: Տեր-Պետրոսյանը խոսել էր նախկին միութենական հանրապետություններում գոյություն ունեցող քաղաքական եսասիրության և նոր միավորի ստեղծման տնտեսական փոխշահավետության մասին:

Այդուհանդերձ, Տեր-Պետրոսյանն իր ելույթներում բավականաչափ քննադատական է խորհրդային Միության տարիների և դրա իշխանությունների վարած քաղաքականության նկատմամբ:

Նույն ժամանակահատվածում ռուսական «Իզվեստիա» թերթին տված հարցազրույցում Տեր-Պետրոսյանը փակուղային էր անվանել իրավիճակը ԽՍՀՄ-ում և հայտարարել, որ անկախության ձեռքբերմամբ Հայաստանն ի վիճակի է միջնորդ դառնալ Արևմուտքի և Արևելքի միջև:

«Նախկին ԽՍՀՄ-ում փակուղու վիճակով բավարարվող Հայաստանը անկախության պայմաններում հնարավորություն է ստանում դուրս պրծնելու և աշխույժ միջազգային խաչմերուկ դառնալու՝ թե՛ քաղաքական ու մշակութային, թե՛ տնտեսական իմաստով՝ կապող օղակ ծառայելով Արևելքի և Արևմուտքի միջև բոլոր տնտեսական շփումների համար», -ասել էր Տեր-Պետրոսյանը:

Հատկանշական է, որ նույն հարցազրույցում, պատասխանելով ռուսական թերթի լրագրողի հարցին այն մասին, թե արդյո՞ք ՀՀ նախագահը կհստում է քաղաքական որոշ գործիչների այն տեսակետը, թե Ռուսաստանում առկա են կայսերական մղումներ և նախկին կենտրոնի տեղը գրավելու ձգտում, Տեր-Պետրոսյանը պատասխանել էր, որ նման մեղադրանքների համար հիմք չի տեսնում, և ընդհակառակը՝ Ռուսաստանը օրըստօրե ավելի է ձգտում ազատվել դրանցից:

Այդուհանդերձ, այս հարցազրույցից մոտ մեկ ամիս անց ռուսական մեկ այլ լրատվամիջոցի՝ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ին տված հարցազրույցում Տեր-Պետրոսյանը հայտարարել էր, որ Հայաստանի տարածքում գտնվող նախկին ԽՍՀՄ զինվորականները կարող են օգտագործվել որպես քաղաքական իրադրությունը սրող գործոն, քանի որ գոյություն ունի առանց Հայաստանի կառավարության հետ խորհրդակցելու զինվորական ղեկավարության որոշումների ընդունման հնարավորություն:

Տեր-Պետրոսյանի՝ խորհրդային անցյալի վերաբերյալ վերաբերմունքն առավել հստակ է դառնում 1992 թ.-ին Հայաստանի Հանրապետության զինանշանի ընտրության Գերագույն խորհրդի մարտի 25-ի նիստի ժամանակ, երբ մի քանի ձախողված քննարկումներից հետո ԳԽ պատգամավորների ընտրությանը ներկայացվել էր պետական զինանշանի երկու օրինակ՝ Հայաստանի առաջին հանրապետության և հայկական ԽՍՀ-ի զինանշանները: Տեր-Պետրոսյանը, խորհրդարանին կոչ անելով նախապատվությունը տալ 1918 թ.-ի հանրապետության զինանշանին, հայտարարել էր, որ իր ամբողջ ազդեցությունը կգործադրի այդ նպատակին հասնելու համար:

Ուշագրավ է նաև այդ ժամանակ գործող նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ղեկավարած կուսակցության՝ Հայոց համազգային շարժման վերաբերմունքը երկրի

խորհրդային անցյալին: 1993-ի հոկտեմբերին, երբ Ռուսաստանի Դաշնությունում ներքին քաղաքական լարված իրավիճակ էր՝ պայմանավորված Մոսկվայում տեղի ունեցող անընդհատ բողոքի ցույցերով, և Մոսկվայում արտակարգ դրություն էր հայտարարված, ԶՅԾ-ն հայտարարություն էր տարածել՝ դատապարտելով Մոսկվայի Սպիտակ տան վրա խորհրդային դրոշը ծածանելու իրադարձությունը: ԶՅԾ-ն նրանց կոմունիստական կուսակցության ներկայացուցիչներին մեղադրում էր Ռուսաստանը կրկին շովինիստական կայսերապետության և համակենտրոնացման հսկա ճամբարի վերածելուն ուղղված գործողությունների մեջ:

Հայաստանի խորհրդային անցյալի մասին հիշատակումների հանդիպում ենք նաև Տեր-Պետրոսյանի նախագահության օրոք Հայաստանի կառավարության նախարարների հանրային ելույթներում և հարցարույցներում: Նման ելույթերի ու հրապարակումների հիմնական մասը խորհրդային հիշողությունների երազականության մասին են:

«Գիտե՞ս, ցավոք, մեր հիշողությունը կարծ է: Մոռացել ենք, որ մի կոմսոմոլի հրահանգի հետ բարձրաձայն խոսելու շնչառություն չունեինք, մոռացել ենք մեր ստրկամիտ վիճակի մասին, մոռացել ենք որ Ղարաբաղը չէ՝ Հայաստանն էլ չկար»,- «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի լրագրողին ասում էր հանրապետության պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, ապա հավելում. «Պատկերացրու այսպիսի վիճակ. տաք լոգարանում պառկած երակդ կտրում ես ու երանության մեջ մեռնում: Մեքն էլ այդպես երանության մեջ մեռնում էինք ու չէինք զգում: Մոռացվում է նաև այդ մասին: Միայն հիշում ենք, որ գազ կար, տաք ջուր կար, հաց կար... պետք է հիշեցնել, անընդհատ պետք է հիշոցնել»:

Բացի այս, նորանկախ Հայաստանի պաշտոնյաների կողմից հաճախ խորհրդային Միությանը նույնականացվել է անառողջ հասարակության ձևավորման տեսանյունից: Հատկանշական է պետություն-քաղաքացի հարաբերությունների մոդելավորման դիտարկումը անկախության առաջին տարիներին:

«Մեր հասարակությանը բնորոշ է եղել մի բան. մարդիկ իրենց տեսնում են ոչ թե աշխատանքում այլ ընդհակառակը... խորհրդային Միության պայմաններում մենք պարզապես կատարողներ էինք, և մարդը նույնացվում էր իր պաշտոնին: Այլ մոտեցումներ են պետք, երբ քո անկախ պետության պայմաններում ես աշխատում»,- «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթին տված հարցազրույցում 1993-ին հայտարարում էր այդ ժամանակ երկրի վարչապետ Հրանտ Բազրատյանը՝ օրինակ բերելով, որ նախկինում խորհրդային Հայաստանի առևտրի նախարարը կարիք չուներ ԽՍՀՄ շահերի մասին մտածելու. «Նրա խնդիրն էր գնալ, պոկել, բերել, իսկ այժմ առևտրի նախարարի խնդիրը պեկել-բերելը չէ, քանի որ չկա մեկը, որից կարելի է պոկել: Այսօրվա առևտրի նախարարի գործը ստեղծելն է»:

Բազրատյանը նաև կարծիք էր հայտնում, որ նորանկախ Հայաստանին տարիներ են անհրաժեշտ, որպեսզի մարդիկ հասկանան, որ այսպես՝ իրար կրծելով կամ

թալանելով, պետության, հասարակության շահերը ոտնահարելով ոչնչի չեն հասնելու:

Խորհրդային Միության տարիները՝ որպես սեփական անձի, գերատեսչության համար որքան հնարավոր է շատ կորզելու պարզունակ, բայց այդ ժամանակների համար բնական և արդարացված հոգեբանության տարիներ ներկայացնող մտքեր նաև այդ օրերին Հայաստանի լուսավորության նախարար Հայկ Ղազարյանի հողվածներից մեկում ենք կարդում:

Հայաստանի խորհրդային անցյալի հիշատակման և շահարկման թեման պաշտոնական դիսկուրսում և պետական մեդիայում ակտիվանում է հատկապես 1995 թվականին՝ խորհրդարանական ընտրություններին ընդառաջ, և պայմանավորված է Հայաստանի կոմունիստական կուսակցության ակտիվացմամբ: Այս շրջանում պետական պաշտոնաթերթ հանդիսացող «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում բազմաթիվ հրապարակումների ենք հանդիպում խորհրդային անցյալի մասին, որոնք հիմնականում ծաղրական բնույթ են կրում և բացասական են ներկայացնում երկրի խորհրդային փորձառությունը:

Հատկանշական է, որ 1996-ին պետական մամուլում նաև, կարելի է ասել, արշավ է սկսվում կոմունիստական կուսակցության դեմ, որը, «հաշվի առնելով Ռուսաստանի հետ մեր արյունակցական կապերը», առաջարկում էր օր առաջ նետվել Ռուսաստանի գիրկը: Սա պայմանավորված է ընտրություններից առաջ և միևնույն ժամանակ Ռուսաստանում տեղի ունեցած ընտրություններում կոմունիստական կուսակցության ձեռքբերած հաջողության հետ: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը գրում է, որ Հայաստանում դասական առումով կոմունիստ կարելի էր տեսնել միայն հեռուստատեսությամբ: Նույն շրջանում արված մեկ այլ հրապարակման մեջ պաշտոնաթերթը կոմունիստներին համեմատում է դիակի հետ և հավելում՝ այլևս և մեկընդմիշտ ճանաչվում է կոմունիզմի մահը:

Ուշադրության է արժանի նաև պետական մամուլում խորհրդային անցյալի ներկայացումը Տեր-Պետրոսյանի իշխանության օրերին: Հայկական պետական մեդիայի համար սա մի ժամանակշրջան էր, երբ այն փորձում էր տրանսֆորմացնել ընդհանուր խորհրդային հայրենիքի գաղափարը՝ անկախ Հայաստանի՝ որպես հայրենիք ընկալման համատեքստում: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը 1992 թ. փետրվարի 25-ի խմբագրականում հիշեցնում է, որ նախկինում խորհրդային բանակ զինվոր ուղարկելը հայկական գյուղերում տոնախմբություն էր, սակայն այժմ վերջապես ռուսաստանները վերջացան և հայրենիքն անկախ Հայաստանն է:

Այս տարիներին պետական մամուլում կարելի է հանդիպել նաև հողվածների, որոնք չեն վարանում լուսաբանել հայ-ադրբեջանական հարաբերությունների լարումը, գրել խորհրդային Միության՝ դրանում ունեցած բացասական դերի մասին:

«Ռուս տղա Միխայիլ Գորբոչովը քանիցս հայ-ադրբեջանական կոնֆլիկտը կարգավորելու հնարավորություն է ունեցել: Նա ոչ թե պարզապես դա ձեռքից բաց է

թողել, այլ իրադարձությունները գիտակցաբար ավելի է սրել»,- ռուս հրապարակախոս Անդրեյ Մալգինի հոդվածն է վերահրապարակում պաշտոնաթերթը: Այդուհանդերձ, հարկ ենք համարում նշել, որ նույն հոդվածում շահարկվում է Լեռնային Ղարաբաղը Ռուսաստանի ժամանակավոր պրոտեկտորատ դարձնելու դրույթը՝ որպես ռուսական կողմի մեղքերի քավություն:

Պաշտոնաթերթ հանդիսացող օրաթերթում նաև ստալինյան բռնապետության մասին են բազմաթիվ հրապարակումներ արվել, ինչպիսին է, օրինակ, «Չմոռանանք անցյալը» հոդվածը, որը ժողովրդի դահիճ Իոսիֆ Ստալինին մեղադրում է տասնյակ հազարավոր հայերի սպանության մեջ:

1996-ի մարտի 19-ին Հայաստանի Ազգային ժողովրդի պատգամավորները մի հայտարարություն հրապարակեցին դրանից օրեր առաջ ՌԴ Պետդոմայի ընդունած մի որոշման վերաբերյալ, որով չեղյալ էին համարվում Բելովեժյան համաձայնությունները: «ՀՀ Ազգային ժողովը նման որոշումը որակում է որպես նախկին ԽՍՀՄ տարածքում առաջացած պետությունների ինքնիշխանության, ժողովուրդների ազատության և միջազգային իրավունքի խախտում: Դոմայի որոշումները կոմունիստներին բնորոշ տգետ և բռի գործելակերպի արտահայտություններ են», - ասվում է հայտարարության մեջ, որում նաև ընդգծվում է, որ *«իր հոգևարքն ապրող խորհրդային իշխանության ռազմական բիրտ ճնշմանը դիմակայելով՝ հայ ժողովուրդը որոշել է չմասնակցել կայսրության պահպանմանը և օրենքի սահմաններում հռչակել է անկախություն»:*

Խորհրդային անցյալի ներկայացումը Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի իշխանության տարիներին

Լևոն Տեր-Պոտրոսյանի իշխանության օրոք պետական մամուլում կոմունիզմի ծաղրը շարունակվում է նաև Ռոբերտ Քոչարյանի նախագահության տարիներին՝ մասնավորապես ծաղրի ենթարկելով Հայաստանի կոմունիստական կուսակցության ներկայացուցիչներին:

Տարբեր պաշտոնյաների կողմից հաճախ ենք հանդիպում արտոնյալ ջերմոցային հին պայմանների վերստեղծման անհնարությանը:

2000 թվականին Երկրորդ համաշխարհային պատերազմում հաղթանակի 55-ամյակի կապակցությամբ ԱՊՀ անդամ պետությունների ղեկավարների ուղերձին միացել էր նաև Հայաստանի Հանրապետության նախագահը: Ուղերձը, որը կոչ էր անում բոլոր ժողովուրդների համար արդար և իրավահավասար խաղաղություն հաստատել, ընդգծում էր, որ հաղթանակի հիմքում, ի թիվս այլ գործոնների, ԱՊՀ անդամ երկրների ժողովուրդների եղբայրությունն է:

Քոչարյանի իշխանության շրջանում անկախության օրվան նվիրված ուղերձներում այլև անդրադարձ չկա խորհրդային անցյալին, հիմնական շեշտադրումը զարգացման նոր փուլի վրա է:

Քոչարյանի ելույթներում հազվադեպ կարելի է հանդիպել հիշատակումների Խորհրդային Միության տարիներին ընդունված արատավոր կարգերի վերաբերյալ: Օրինակ՝ 2003 թվականի նախագահական ընտրություններից առաջ նախընտրական իր առաջին հանդիպման ընթացքում Քոչարյանը հիշատակում է ԽՍՀՄ-ում գործող կուսակցական համակարգը, որի շրջանակում, խոսելով իր կադրային քաղաքականությունից, համեմատական է տանում, որ կուսակցական տոմսը «ինչ-որ տեղ պետական ծառայության մասնակից լինելու վկայագիր էր»:

2005 թվականը հայտարարվեց Հայաստանում Ռուսաստանի տարի: Այդ կապակցությամբ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին հղած իր ուղերձում նախագահ Ռոբերտ Քոչարյանն ընդգծում է. *«Հատկանշական է, որ Հայաստանում Ռուսաստանի տարվա անցկացումը համընկնում է ֆաշիզմի դեմ հաղթանակի 60-ամյակին: Մեր ընդհանուր պատմության այդ հերոսական էջը միահյուսել է մեր ժողովուրդների ճակատագրերը և ավելի է մերձեցրել նրանց»:*

Պուտինի՝ Հայաստան կատարած աշխատանքային այցերից մեկից հետո՝ համատեղ ասուլիսում, պատասխանելով ռուսական հեռուստաընկերության հարցին, թե ինչ պետք է արվի, որպեսզի Հայաստանի երիտասարդ սերունդն առնչակից դառնա ռուսական մշակույթին, Քոչարյանը կարծիք է հայտնում, որ Ռուսաստանում գործող հեռուստաընկերություններ *«կարող էին ավելի հաճախակի անդրադառնալ,*

հեռարձակել, հաղորդումներ պատրաստել Հայաստանում և նախկին ԽՍՀՄ երկրներում առկա մշակութային գործընթացների մասին: Այսինքն՝ կորցնել այն, ինչ որ ձեռք է բերվել սերնդե-սերունդ, պարզապես ափսոս է: Նախկինում մենք շահեկան դիրքերում էինք մշակութային կապերի առումով, բայց ենթադրել, որ ամեն ինչ կմնար իր տեղում՝ միամտություն կլիներ: Մենք ստիպված ենք հաշվի նստել այս իրականության հետ, ուստի եկեք այսօր ստեղծենք գործիքներ, որոնց միջոցով մենք կկարողանանք հարթել այն կորուստները, որոնք այսպես թե այնպես պիտի լինեն»:

Նույն ժամանակ մեկ այլ ելույթում Քոչարյանը զուգահեռներ է տանում Հայաստանում ռուսական զորքերի առկայության և ԽՍՀՄ՝ Համաշխարհային պատերազմում տարած հաղթանակի միջև:

«Հայաստանում Ռուսաստանի տարին համընկել է Հայրենական պատերազմում ֆաշիզմի դեմ հաղթանակ 60-ամյա հորեյյակի հետ: Դա խորապես խորհրդանշական է, քանի որ մեր ժողովուրդները մարտնչել են ուս-ուսի և միասին են հաղթանակ տարել, որ փրկեց աշխարհը ֆաշիզմի սպառնալիքից: Այսօր մեր զինվորականները շարունակում են մեր երկրների և ժողովուրդների խաղաղության և անվտանգության ապահովման գործում համագործակցության փառավոր ավանդույթները», - ասում է երկրորդ նախագահը:

Քոչարյանից բացի, քիչ են նաև հիշատակումները նրա նախագահության օրոք կառավարության անդամների կողմից:

2005-ի մարտին ՀՀ նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանն իր զեկուցումներից մեկում մեղադրում է ԽՍՀՄ վերին իշխանություններին Սումգայիթում և Բաքվում հայկական ջարդերի իմացության մեջ:



Այդուհանդերձ, 2008 թվականին իշխանության գալով՝ Սերժ Սարգսյանի հանրային ելույթներում դժվար է հանդիպել Հայաստանի խորհրդային անցյալի վերաբերյալ հիշատակումների: Դրանք մեծապես արվել են պոշտոնական հանդիսությունների, տոնակատարությունների, մայիսի 9-ի կապակցությամբ և հիմնականում դրական երանգ են ունեցել՝ հետզհետե ավելի հազվադեպ դառնալով:

Արեն Մելիքյան